ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՏՐԻՑԱ

Արթիկ ԾՐԱԳԻՐ/Արթիկ/ - ԲԾԻԳ Կրթական Հարթակ

ԲՀՊՏ ԱՐԴՅՈՒՆՔ/ԲՀՊՏ/ - ԲԾԻԳ Կրթական Հարթակ

«Արթիկ քաղաքի փակված քարհանքի թափոնների և ջրհեղեղների կառավարում»/ Արթիկի ծրագիր/ և «ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքներին հարակից էկոհամակարգերի և համայնքների հարմարվողականության կարողությունների ամրապնդում» /ԲՀՊՏ/ ծրագրերի շրջանակներում գիտելիքի և նորարարական լուծումների բաժիններ, որոնք լուսաբանում են կլիմայի փոփոխության հարմարվողականությունը ջրի, հողի, անտառների կառավարման և մշակաբույսերի արտադրողականության մեջ:

ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՏՐԻՑԱ



Ջրի կառավարում

«Արթիկ քաղաքի փակված քարհանքի թափոնների և ջրհեղեղների կառավարում» ծրագրի շրջանակում Արթիկջուր գետի հունի մաքրման, պատնեշների ամրացման աշխատանքները նվազեցնում են ջրհեղեղների ռիսկերը՝ ապահովելով ջրի կայուն կառավարում կլիմայի փոփոխության պայմաններում:

Փակ քարհանքի տարածքում իրականացված նախագծից քաղված գիտելիքը վկայում է, որ ոռոգման համակարգերի կառուցումը (11,571 գծամետր խողովակաշար և 50 մ³ ջրի կուտակիչ)՝ զուգորդված Արթիկջուր գետի հունի ամրացման աշխատանքների հետ (120 մ գաբիոնային շարվածք), էապես նվազեցնում է ջրհեղեղների ռիսկերը և խթանում ջրային ռեսուրսների կայուն կառավարումը:

ԱՐԹԻԿ ԱՐԴՅՈՒՆՔ/Արթիկ/ - ԲԾԻԳ Կրթական Հարթակ

Դիլիջանում և Վեդի համայնքներում այգիների հիմնման նախագծի շրջանակում ջրի կայուն օգտագործումը՝ մասնավորապես ոռոգման համակարգերի ներդրումը այգիներում, բարելավում է հողի ջրի կլանման կարողությունը և նվազեցնում է երաշտի ռիսկերը կլիմայի փոփոխության պայմաններում:

Արթիկի ԲՀՊՏ ծրագրերից քաղված դասերը ցույց են տվել, որ ջրախնայող ոռոգման համակարգերի տեղադրումը և հեղեղների կառավարման կառույցների կառուցումը նվազեցնում են երաշտի ու հեղեղների ռիսկերը՝ ապահովելով ջրի կայուն կառավարում կլիմայի փոփոխության պայմաններում:

Բնական և գյուղատնտեսական էկոհամարկարգերի հարմարվողականության բարձրացում /ԲՀՊՏ/ - ԲԾԻԳ Կրթական Հարթակ

Արթիկի ծրագրի շրջանակում ջրհեղեղների ռիսկի նվազեցման վերաբերյալ բնակչության իրազեկվածության և գիտելիքի բարձրացման գործընթացը ցույց տվեց, որ գիտականորեն հիմնավորված արշավները, կրթական մոտեցումները, ներառյալ դասընթացները, էկոակումբները և մեդիան զգալիորեն մեծացնում են համայնքների հարմարվողական՝ մասնավորապես ջրերի կառավարման կարողությունները, նվազեցնելով բնական աղետների ռիսկերը և խթանելով կայուն զարգացումը:

Բնակչության իրազեկվածություն և գիտելիք /Արթիկ/ - ԲԾԻԳ Կրթական Հարթակ

«Արթիկ քաղաքի փակված քարհանքի թափոնների և ջրհեղեղների կառավարում» ծրագրի շրջանակում հեղեղաբեր ձորակներում գաբիոնային շարվածքների կառուցման գործընթացից քաղված դասերը ցույց են տվել, որ նման միջոցառումները 25-40%-ով նվազեցնում են ջրհեղեղների ռիսկերը՝ ապահովելով ջրի կայուն կառավարում կլիմայի փոփոխության պայմաններում:

Էկոհամակարգերի վերականգնում /ԲՀՊՏ և Արթիկ/ - ԲԾԻԳ Կրթական Հարթակ

Հողի կառավարում

Փակ քարհանքի տարածքում իրականացված 60,498.5 մ³ հողային աշխատանքները, 12,960 մ² սևահողի օգտագործումը և պոլիմերային գեոցանցերի կիրառումը նվազեցնում են հողի էրոզիան և վերականգնում ռեգրադացված տարածքները՝ նպաստելով կլիմայակայուն հողօգտագործմանը:

Արթիկում լանդշաֆտների վերականգնում հաջողված փորձ ՄԱՍ 1/ Արթիկ/ - ԲԾԻԳ Կրթական Հարթակ

Ինչպես նշվում է «Արթիկի լանդշաֆտների վերականգնում հաջողված փորձ» գրքում, լանդշաֆտների վերականգնման նախագծի արդյունքները վկայում են, որ հողի վերականգնման միջոցառումները՝ ներառյալ սևահողի լիցքը, պոլիմերային գեոցանցերի կիրառումը և գիտական վերլուծությունները (ICP-MS, AAS), նվազեցնում են էրոզիան և բարելավում հողի բերրիությունը՝ խթանելով կլիմայակայուն հողօգտագործումը:

Այգիների հիմնման առանձնահատկություններ /ԲՀՊՏ/ - ԲԾԻԳ Կրթական Հարթակ

ԲՀՊՏ ծրագրի շրջանակում Դիլիջանի, Փամբակի, Վեդի համայնքներում դեգրադացված տարածքների շուրջ կատարված աշխատանքներից քաղված դասերը ցույց են տվել, որ հողի լաբորատոր անալիզները և երկփուլ պարարտացումը հանքային ու օրգանական պարարտանյութերով (աշուն-գարուն) նվազեցնում են հողի դեգրադացիայի ռիսկերը՝ ապահովելով հողի կայուն կառավարում կլիմայի փոփոխության պայմաններում:

Արթիկում էկոլոգիական կրթության կազմակերպման շրջանակում անցկացված դասընթացներից քաղված դասերը, որոնք ներառել են դեգրադացված տարածքների վերականգնման և ցանքաշրջանառության մեթոդներ, ցույց են տվել, որ հողի կայուն կառավարման մասին գիտելիքները բնակչության շրջանում նվազեցնում են ագրոլանդշաֆտների արտադրողականության անկման ռիսկերը՝ ապահովելով կայուն հողօգտագործում կլիմայի փոփոխության պայմաններում:

Անտառների կառավարում

Արթիկում լանդշաֆտների վերականգնում հաջողված փորձ ՄԱՍ 2/Արթիկ/ - ԲԾԻԳ Կրթական Հարթակ

Դիլիջանում և Վեդիում այգիների հիմնումը ցույց տվեց, որ տեսակային կազմի ընտրությունը (օրինակ՝ չորադիմացկուն, միջին աճեցողությամբ, բարձր բերքատվությամբ և այլն) և համայնքային ներգրավումը խթանում են էկոհամակարգերի պահպանումը՝ բարձրացնելով կենսաբազմազանությունն ու կլիմայի հարմարվողականությունը:

Արթիկում լանդշաֆտների վերականգնման նախագծի շրջանակը ցույց տվեց, որ կլիմայակայուն ծառերի և թփերի տնկումը, զուգակցված բնապահպանական ինժեներիայի մեթոդներով (օրինակ՝ խոտացանք), բարձրացնում է կենսաբազմազանությունը և մեղմում միգրացիոն խանգարումների ռիսկերը՝ խթանելով անտառային էկոհամակարգերի կայունությունը, ինչը ներկայացված է «Արթիկի լանդշաֆտների վերականգնում հաջողված փորձ» գրքում:

Արթիկում լանդշաֆտների վերականգնում հաջողված փորձ ՄԱՍ 1/Արթիկ/ - ԲԾԻԳ Կրթական Հարթակ

Արթիկի փակված քարհանքի վերականգնման գործընթացից քաղված դասերը, որոնք ներառում են 29318 ծառերի ու թփերի տնկում և 30 հա անտառպուրակի ստեղծում, ցույց են տվել, որ նման միջոցառումները 30%-ով նվազեցնում են էրոզիայի ռիսկերը՝ ապահովելով անտառների կայուն կառավարում կլիմայի փոփոխության պայմաններում:

Էկոհամակարգերի վերականգնում /ԲՀՊՏ և Արթիկ/ - ԲԾԻԳ Կրթական Հարթակ

Մշակաբույսերի արտադրողականություն

«Արթիկում լանդշաֆտների վերականգնում հաջողված փորձ» գրքում ընգծվում է, որ օրգանական նյութերի կիրառումը հողի ամրակայման համար և խոտաբույսերի ցանքը բարելավում են հողի բերրիությունը՝ աջակցելով կայուն գյուղատնտեսական արտադրությանը և կլիմայի փոփոխության հարմարվողականությանը:

Արթիկում լանդշաֆտների վերականգնում հաջողված փորձ ՄԱՍ 2/Արթիկ/ - ԲԾԻԳ Կրթական Հարթակ

Արթիկում լանդշաֆտների վերականգնում նախագիծը ցույց տվեց, որ օրգանական և հանքային պարարտանյութերի կիրառումը վարելահողերում և խոտաբույսերի ցանքը բարելավում են հողի կառուցվածքը՝ աջակցելով կայուն գյուղատնտեսական արտադրությանը:

«ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքներին հարակից էկոհամակարգերի և համայնքների հարմարվողականության կարողությունների ամրապնդում» ծրագրի շրջանակում դեգրադացված արոտների և խոտհարքների բարելավման գործընթացից քաղված դասերը ցույց են տվել, որ խոտաբույսերի սերմերի ցանքը և բուսական ծածկույթի 10-25%-ով նոսրացման կանխարգելումը նվազեցնում են կերի բազայի արտադրողականության անկման ռիսկերը՝ ապահովելով կայուն արտադրողականություն կլիմայի փոփոխության պայմաններում:

ԲՀՊՏ ծրագրի շրջանակում դեգրադացված խոտհարքների բարելավման գործընթացից քաղված դասերը ցույց են տվել, որ խոտաբույսերի սերմերի ցանքը և բուսական ծածկույթի 10-25%-ով նոսրացման կանխարգելումը նվազեցնում են կերի բազայի արտադրողականության անկման ռիսկերը՝ ապահովելով մշակաբույսերի կայուն արտադրություն կլիմայի փոփոխության պայմաններում:

Վեդիում, Դիլիջանում, Ֆիոլետովոյում և Մարգահովիտում դեղաբույսերի աճեցավայրերի վերականգնման գործընթացից քաղված դասերը, որոնք ներառում են 5000 քմ տարածքներում սերմնացան և կենսահումուսի կիրառում, ցույց են տվել, որ այդ մեթոդները բարձրացնում են կենսաբազմազանությունը 15-30%-ով՝ ապահովելով մշակաբույսերի կայուն արտադրություն կլիմայի փոփոխության պայմաններում:

Presented with xmind